



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ՝
«ԲԱՏԱԿՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Արմեն Մանուկյան
Ա. ՄԻՆԱՍՅԱՆ
«ՀԿ» 11 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՍՈՒԹՅԱՆ

ԲՓ 108

ԶԵՆՆԱՐԿՈՂԸ՝

<<Սոս-Սաքոն>> ՍՊԸ

«Սյունիքի մարզ, ք. Ազարակ,
Սայաթ Նովա 7/4

Գործունեությունը՝

**Ալվանքի նեֆելինային սիենիփների հանքավայրի
արդյունահանման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվեկություն**
«Սյունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԽԿ-ի
տնօրեն՝

Վ. Սահակյան



Առդիր եզրակացությունը՝ *6* թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՍՈՒԹՅԱՆ**

թիվ ԲՓ 108

«24» 11 2017թ.

**ՀՀ Սյունիքի մարզի Ալվանքի նեփելինային սիենիտների հանքավայրի
արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություն**

Պատվիրատու՝

Ներկայացված նյութեր՝

Գործունեության կատեգորիա՝

«Սոս-Սաքո» ՍՊԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր

«Ա»

Տեղադրման վայրը՝

ՀՀ Սյունիքի մարզ

ՀՀ Սյունիքի մարզի Ալվանքի նեփելինային սիենիտների բացահանքի սույն աշխատանքային նախագիծը կատարված է <<Սոս-Սաքո>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Հանքավայրի պաշարները C1 կարգով 807.4 հազ.մ3 ծավալով հաստատվել են ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ՕՀՊԳ-ի կողմից 23.02.2009 թ. N 210 որոշումով: Պաշարները հաստատվել են որպես հումք ԳՈՍՏ 9479-98-ի պահանջներին համապատասխան բլոկների արտադրության համար:

Բլոկների ելքը նեփելինային սիենիտների զանգվածից կազմում է 52.0%: Արտադրական թափոնները նույն որոշումով հաստատվել են որպես հումք շինարարական խիճ ստանալու համար:

Ալվանքի նեփելինային սիենիտների հանքավայրը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանի Ալվանք գյուղից 0.4 կմ հյուսիս-արևմուտք, Մեղրի քաղաքից 7կմ հյուսիս - արևելք: Մոտակա բնակավայրերն են՝ քաղաքներ Մեղրին, Ազարակը և Ալվանք, Շվանիձոր, Քաջկերտ, Վարդանիձոր, Լեհվազ գյուղերը: Հանքավայրը կազմված է Շվանիձոր-Մեղրի ավտոմայրուղու հետ գրունտային, 2.0 կմ երկարությամբ քարեկարգ ճանապարհով:

Հանքավայրը գտնվում է Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջում 828 – 887 բացարձակ բարձրությունների վրա:

Շրջանի կիման մերձմայրցամաքային է: Օդի ջերմաստիճանը ձմռանը՝ կազմում է 0 – -12 °C, խոկ ամռանը՝ օգոստոսին բարձրանում է մինչև + 34 °C: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 300–350 մմ:

Հանքավայրի տարածքը բնութագրվում է խիստ կտրատված ու լեռնագործական ժայռային մերկացումներով:

Օգտակար հանածոն ներկայացնում է մազմատիկ ապարների զանգվածովին կուտակ:

Մակարացման ապարները ներկայացված են հողմահարված, ձեղքավորված նեփելինային սիենիտներով:

այսուհետև 1 (584) օրինակ՝  Ա. Անդրեասյան

Խիստ ճեղքավորված սիենիտների հզորությունը չի գերազանցում 2.4մ-ը, միջինը կազմելով 2.28մ: Մակարացման ապարներն առանց առանձնակի դժվարության կարող են հեռացվել բուղողեր-փխրեցուցիչով:

Բուն սիենիտների մշակումը նախատեսվում է իրականացնել բլոկների փորձնական արդյունահանման ժամանակ կիրառած հետևյալ տեխնոլոգիայով.

- օգտակար հանածոյի զանգվածից մենաքարի անջատում հորատասեպային եղանակով՝ բուղողերի օգտագործմամբ,
- մենաքարերի տրոհում ստանդարտ բլոկների հորատասեպային եղանակով և քարհատ կացնով:

Բլոկների արդյունահանման տեխնոլոգիան ներառելու է նաև դրանց բարձումը ավտոինքնաթափերի մեջ:

Հանքավայրում և դրան հարող տարածքներում գեղյինամիկ երևույթներ՝ սողանքներ, կարստեր և փլուզումներ, որոնք կարող են բարդացնել շահագործման աշխատանքները, չեն հայտնաբերվել:

Վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ Ալվանքի հանքավայրի լեռնա-երկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները բարենպաստ են դրա շահագործումը բաց եղանակով իրականացնելու համար:

Ալվանքի նեֆիլինային սիենիտների հանքավայրը հետախուզվել է սյունակային հորատման 1 ուղղաձրգ հորատանցքով, 1 փորձնական բացահանքով և 3 մերկացումներով:

Հանքավայրի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկն իրականացվել է մեկ հաշվարկային բլոկի (բլոկ 1-B) սահմաններում: Որպես պաշարների հաշվարկման ստորին սահման ընդունվել է 826 մ բացարձակ նիշ ունցող հորիզոնը:

Հաշվի առնելով հետախուզման ընտրված մեթոդիկան, ոելիեֆի և օգտակար հանածոյի տեղադրման առանձնահատկությունները, օգտակար հանածոյի պաշարների հաշվարկն իրականացվել է երկրաբանական բլոկների մեթոդով: Ընդ որում, պաշարները հաշվարկվել են որպես բացահանքի սահմաններում լեռնային զանգվածի և մակաբացման ապարների ծավալների տարբերություն:

1.	Առավելագույն երկարությունը		մ	262.4
2.	Առավելագույն լայնությունը		մ	87.6
3.	Մշակման խորությունը		մ	37.0
4.	Հանքաստիճանի բարձրությունը վերջ-նական դիրքում		մ	5.0
5.	Հանքաստիճանի թերման անկյունը	աստ.		90
6.	Անվտանգության թերմայի լայնությունը	մ		2.0
7.	Բացահանքի կողերի թերման անկյունը	աստ		մինչև 68
8.	Բացահանքային դաշտի օտարման տարածքը	հա		2.15
9.	Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը Օգտակար հանածոյի արդյունաբերական պաշարների քանակը Մակաբացման ապարների ծավալը Մակաբացման միջին գործակիցը	մ³		807400 175740 47300 0.269
		մ³ / մ³		



Հեռնային զանգվածի և մակարացման ապարների միջին հզորությունները որոշվել են համապատասխանաբար պալետկայի և միջին թվաքանականի եղանակներով: Բլոկի մակերեսը հատակագծի վրա որոշվել է երկրենո մակերեսաշափով:

Հանքավայրին հարակից է «Արևիք» ազգային պարկի սահմանը, բացահանքի վերջնական եզրագծի մեջ ներառվել են միայն Ազգային պարկի սահմաններից դուրս ընկած նեֆելինային սիենիտների հաստատված պաշարները:

«**Սոս-Մաքո**» ՍՊԸ կողմից 15.0 տարի ծառայման ժամկետով նախագծված բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

Դ փուլի բացահանքի շահագործունը կատարվում է հանքային մարմնի բարձրադիր գմբեթային մասում, որտեղ բացակայում են բացահանքի կողերում թողնվող պահպանիչ բնամասները: Օգտակար հաստաշերտի տեղադրման լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմաններից կախված կորուստներ այս դեպքում չկան: Հանքավայրում նեֆելինային սիենիտների հաստատված պաշարների կորուստները այն բնամասում են, որն ընկած է «Արևիք» Ազգային պարկի սահմաններում: Այս կորուստները կազմում են հանքավայրի նեֆելինային սիենիտների հաստատված պաշարների 78.2 %-ը:

Բացահանքը շահագործման հանձնելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները:

1. «**Սոս-Մաքո**» ՍՊԸ քարամշակման արտադրամասից մինչև բացահանքի 834.0 մ նիշ ունեցող հորիզոնների բնահողային ավտոճանապարհի կարգաբերում, $L = 12.0 \text{ կմ}$, $b = 8.0 \text{ մ}$;
2. Բացահանքի 834.0 մ նիշ ունեցող հորիզոնների մինչև բացահանքի 2052.0 մ նիշ ունեցող հորիզոններ մուտքային ներհանքային ավտոճանապարհի կարգաբերում, $L = 190.0 \text{ մ}$, $b = 8.0 \text{ մ}$;
3. 2058.0 մ նիշ ունեցող հանքաստիճան.
 - մակարացման ապարների հեռացում – 800.0 մ³,
 - այդ թվում՝ հողմահարված նեֆելինային սիենիտներ – 800.0 մ³
4. 855.5 մ նիշ ունեցող հանքաստիճան.
 - մակարացման ապարների հեռացում – 800.0 մ³,
 - այդ թվում՝ հողմահարված նեֆելինային սիենիտներ – 800.0 մ³
 - նեֆելինային սիենիտների զանգվածի արդյունահանում (ուղեկցող հանույթ) – 1173.0 մ³:
6. Արդյունաբերական հրապարակի կառուցում - $S = 300.0 \text{ մ}^2$ ($V = 170.0 \text{ մ}^3$);
5. Լցակույտային բեռնաթափման հարթակի ստեղծում - 190.0 մ³:

Բնահողային ավտոճանապարհների ընդերկայնական առավելագույն թեքությունը ընդունված է մինչև 10.0%:

Բացահանքի հանքաստիճանների բացումը 858.0 մ նիշ ունեցող հանքաստիճանից մինչև 828.0 մ նիշ ունեցող հանքաստիճանը կատարվում է մուեցող ավտոճանապարհից հորիզոնական բացող կիսախրամների անցումով: Բացող կիսախրամների լայնությունը հիմքի մասումը նորունված է 8.0 մ:

Հորիզոնական բացող կիսախրամների անցումը կատարվում է հորատասեպային աշխատանքներով, անվային բարձիչ K-702-ավտոխնճանաբախ KрA3-256Բ լեռնատրանսպորտային համալիրով:

Բացահանքային դաշտի տարածքում մակարացման ապարները ներկայացված են հողմահարված նեֆելինային սիենիտներով:

Տեղանքի սակավաթեք մասերում (մինչև 300) մակարացման ապարները առանձին-առանձին K-702 անվային բարձիչին հարմարեցված բուլղողերի հարթաշերեփով մշակվելուց հետո տեղափոխվում են 15.0-20.0 մ հեռավորության վրա և կուտակվում: Այնուհետև,

կուտակված ապարները K-702 անվային բարձիչի օգնությամբ բարձություն էն ԿրԱ3-256Բ մակնիշի ավտոհնքնաթափի մեջ ու տեղափոխվում արտաքին լցակույտեր:

Հողմահարված նեֆելինային սիենիտների մշակումը և բարձություն ավտոհնքնաթափի մեջ կատարվում է հանքաստիճանի հատակից, ճակատային մոտեցումով, K-702 անվային բարձիչի միջոցով:

Նեֆելինային սիենիտների հաստաշերտի մշակման ժամանակ հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել միակողանի ընդերկայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով, մակարացման ապարներն արտաքին լցակույտ տեղափոխելով: Ընդունված մշակման համակարգի տարրերը հաշվարկված են համաձայն հանքավայրի շահագործման տեխնոլոգիական սխեմայի, որով նախատեսվում է միաբարի արդյունահանման աշխատանքները կատարել հորատասեպային աշխատանքների եղանակով

Ընդունված մշակման համակարգի տարրերն են.

1. Հանքաստիճանի բարձրությունը .
 - աշխատանքայինը – 2.5մ;
 - վերջնական դիրքում, մարելուց հետո – 5.0 մ;
2. Հանքաստիճանի թերման անկյունը հորիզոնի նկատմամբ - 90°;
3. Ընթացքաշերտի լայնությունը – 1,0 մ;
4. Հանույթային բլոկի երկարությունը – 6.0–8.0 մ;
5. Աշխատանքային հրապարակի ամենափռքը լայնությունը – 25,0 մ;
6. Լեռնային աշխատանքների ուղղությունը հարավ-արևելքից հյուսիսի –արևմուտք

Բլոկների արտադրության ժամանակ առաջացած թափոնները $5540.0 \text{ m}^3/\text{տարի}$ կամ $21.31 \text{ m}^3/\text{հերթ}$ ծավալով, K-702 անվային բարձիչին սարքավորված բուլդոզերի հարթաշերեկով տեղափոխվում են մինչև $10.0-15.0 \text{ m}$ միջին հեռավորության վրա և կուտակվում: Այնուհետև կուտակված թափոնները 3.0 m^3 շերեփի տարողությամբ K-702 անվային բարձիչի միջոցով բարձում են ԿրԱ3-256 Բ մակնիշի ավտոհնքնաթափի թափքի մեջ և տեղափոխվում մինչև բարամշակման արտադրամաս, որտեղ նրանցից ստացվում է շինարարական խիճ:

Նեֆելինային սիենիտների բլոկների և թափոնների տեղափոխումը մինչև բարամշակման արտադրամաս՝ 12.0 km^3 միջին հեռավորության վրա, իսկ մակարացման ապարներինը մինչև 0.5 km^3 հեռավորության վրա՝ մինչև արտաքին լցակույտեր, նախատեսվում է կատարել 12.0 m բեռնատարողությամբ (թափքի տարողությունը 8.0 m^3) ԿրԱ3-256 Բ ավտոհնքնաթափերի միջոցով:

Բացահանքի լցակույտ առաջացնող ապարները 47300 m^3 զանգվածով ընդհանուր ծավալով ներկայացված են հողմահարված նեֆելինային սիենիտներով: Բացահանքի լցակույտային տնտեսությունը նախատեսվում է կազմակերպել բացահանքային դաշտի հարավային մասում, 828մ նիշ ունեցող հորիզոնից:

Արտադրական թափոնները բացահանքի շահագործման առաջին տարում ժամանակավորապես պահեստավորվում են հողմահարված նեֆելինային սիենիտների լցակույտի վրա: Ակսած բացահանքի շահագործման 2-րդ տարվանից արտադրական թափոնները, այդ թվում շահագործման 1-ին տարում առանձին կուտակվածք, օգտագործվելու են որպես հումք շինարարական խիճ ստանալու համար: Ժամանակակից նստվածքներ բացահանքի տարածքում չկան: Հողմահարված նեֆելինային սիենիտների լցակույտի ընդհանուր գրառեցրած տարածքը կազմում է 1.14 ha , առավելագույն բարձրությունը՝ 25.0 m , վերին հարթակի մակերեսը՝ 0.98 ha : Լցակույտառաջացումը կատարվում է 1.0 հարկով, բուլդոզերային եղանակով:



Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է նրա արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակույտը և ավտոճանապարհները փոշենստեգման նպատակով ջրելու համար:

Խմելու ջուրը բերվում է Բ1- ԲՀԱ-1,1 մակնիշի կցովի ցիստեռնով, իսկ տեխնիկական ջուրը KO-007 մակնիշի ջրցան ավտոմեքենայով:

Խմելու ջրի օրական ծախսը կազմում է 25.0 լիտր մեկ բանվորի և 16 լիտր մեկ ինժեներատեխնիկական աշխատողի համար: Տեխնիկական ջրի ծախսը ընդունված է 0.5 լիտր/ m^2 :

Բացահանքում գետնաշրերը խսպառ բացակայում են: Բացահանքի տարածքը թափվող մթնոլորտային տեղումների մի մասը ներծծվելու է բացահանքի հատակի ապարների ճաքերի և ծակոտիների միջով, մի մասն էլ կիեռանա ինքնահոս կերպով:

Կենցաղային կեղտաջրերը ինքնահոս կերպով թափվում են բետոնապատ արտաքննի հորր, որտեղից էլ պարբերաբար հեռացվում են հատուկ աղբահան մերենայով:

Ընկերությունը իր պատրաստակամությունն է հայտնում պարբերաբ հանդիպելու Ալվանքի համայնքի ղեկավարության հետ, քննարկելու օգնության ծրագրերը և անհրաժեշտության դեպքում ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բույսե:

Հանքարդյունահանման աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները: Տարածքում չեն հայտնաբերվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներ:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրը աղտոտվածությունից զերծ պահելու նպատակով նախատեսվում է կիրառել բնապահպանական հետևյալ միջոցառումները.

Պարբերաբար հսկել մթնոլորտային օդի մաքրությունը հորատման հրապարակներում, ավտոճանապարհների վրա

Փոշեզրկման նպատակով աշխատանքային գոտիներում պարբերաբար կատարել ջրցանում,

Օզտագործվող ազրեցատները աշխատեցնել սարքին վիճակում վնասակար զագերի գերնորմատիվային արտանետումները բացառելու համար:

Մեքենաների աշխատանքի ժամանակ նախատեսվում է վնասակար նյութերի արտանետումների քանակը փոքրացնելու համար սարքավորումների վրա վտանգավոր նյութերի չեզորացուցիչների տեղադրում։ Ինչպես նաև հետևել որպեսզի մեխանիզմի աշխատանքի ժամանակ վառելիքի և քայլուերի արտահոսք տեղի չունենա:

Զրային ավազանի կեղտուում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

ԵԶՐԱՆՎԳՈՒՄ

Այսպիսով հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են համրայիս բնարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հաստիքայնությունը հավանություն են տվել նախազծի իրականացմանը։ Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումները։



Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքներն իրականացնելու ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքի պահանջներով, <<Արևիք>> ազգային պարկի սահմաններում բացառել որևէ աշխատանքների իրականացումը:

2. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

3. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգ, կազմել հետևախազծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացրուցիչ միջոցառումներ:

4. Առաջացած շինադրի (կենցաղային ադրի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Սոս-Սարո>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի Ալվանքի նեփելինային սիենիտների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Զ. Զուռնացյան